

ՄԱՀ
ՍՈՒՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆԻ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ
(1896—1972)



1972 թվականի հունվարի 28-ին կարճատև, ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ, ՀՍՍՀ վաստակավոր իրավաբան, անվանի փաստաբան և դասախոս Սուրեն Ղահրամանի Արևշատյանը:

Ս. Արևշատյանը ծնվել է 1896 թվականի մայիսի 7-ին Երևանում, տիրացու Ղահրաման Արևշատյանի բարեպաշտ ընտանիքում: Սովորել է Երևանի թեմական դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է և 1916 թվականին ավարտել Պետերբուրգի առևտրի ինստիտուտը:

1916—1918 թվականներին հանգուցյալը զորակոչվել է բանակ և մասնակցել 1918 թվականին Ղարաքիլիսայում թուրքերի դեմ մղվող ճակատամարտին:

1924 թվականին նա սովորում և ավարտում է Ռոստովի ժողովրդական տնտեսության ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը և մինչև 1930 թվականը աշխատում ՀՍՍՀ դատաքննչական մարմիններում՝ լինելով նաև Հայաստանի գերագույն դատարանի անդամ:

1931—1941 թվականներին հանգուցյալը մեծ եռանդով աշխատել է նաև Արվեստի բընագավառում, միաժամանակ սովորել Մոսկվայի թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետում:

1941 թվականից մինչև իր կյանքի վերջը Ս. Արևշատյանը զբաղվել է փաստաբանական աշխատանքով և դասախոսել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և գեղարվեստա-թատերական ինստիտուտում:

Մեծ են Ս. Արևշատյանի ծառայություններ-

ը մեր հանրապետությունում երիտասարդ իրավաբան-մասնագետների պատրաստման գործում:

Ս. Արևշատյանը իրավաբանական մի շարք գրքերի և աշխատությունների հեղինակ է և խմբագիր: Նրա գրչին են պատկանում «Հոետորական արվեստի հիմունքներ», «Շահապիվանի կանոնները», «Դվինի կանոնները» և այլ աշխատություններ:

Ս. Արևշատյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև ՀՍՍՀ քրեական, քրեական-դատավարական օրենսգրքի մշակման գործում:

Ս. Արևշատյանը երկար տարիներ անդամակցել է Արարատյան թեմի թեմական խորհրդին, որպես ատենապետ, և իր օգտակար ծառայությունները բերել՝ Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեությանը: Հանգուցյալը եղել է նաև Մայր Աթոռի իրավաբան-խորհրդատուն:

Ս. Արևշատյանը Մայր Աթոռի կողմից մասնակցել է խաղաղության պաշտպանության միջեկեղեցական հարցերի վերաբերյալ Մոսկվայի մի քանի կոնֆերանսներին և հանդես է եկել խաղաղության պաշտպանության նվիրված հայրենաշունչ ելույթներով:

Փետրվարի 6-ին, կիրակի օրը, ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Մայր տաճարում կատարվում է հոգեհանգստյան արարողություն հանգուցյալի հիշատակին: Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը իր քարոզի մեջ վեր է հանում հանգուցյալի հայրենանվեր գործունեությունը:

Հոգեհանգստյան ավարտին Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է հանգուցյալի հարազատներին, բարեկամներին և ընկերներին, մխիթարության և սփոփանքի խոսքեր ասում ու հայտնում Մայր Աթոռի վիշտը Ս. Արևշատյանի մահվան տխուր առիթով:

Հանգիստ իր ոսկորներին: